

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ և
անկախ աուդիտորի եզրակացություն
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Ապրիլ 2024

Երևան

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Տարեկան ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորի եզրակացություն
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Բովանդակություն

- 3 Անկախ աուդիտորի եզրակացություն
- 6 Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
- 7 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
- 8 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
- 9 Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
- 10 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
- 11 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ընկերության գտնվելու վայրը`

Հայաստանի Հանրապետություն

Իրավական ձևը`

Փակ բաժնետիրական ընկերություն

Հիմնական գործունեության նկարագիրը`

Կազմակերպության գործունեության բնույթը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում

Գլխավոր տնօրեն`

Էդուարդ Մարտիրոսյան

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի բաժնետիրոջը

Եզրակացությունն ֆինանսական հաշվետվությունների աուդիտի վերաբերյալ

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի բաղաբաղանդային ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմքեր» բաժնում ներկայացված հարցերի հնարավոր ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը՝ 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ Հաշվապահական Հաշվառման Ստանդարտներ) համաձայն:

Վերապահումով կարծիքի հիմքեր

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված 98 միլիարդ ՀՀ դրամ (2022: 115 միլիարդ ՀՀ դրամ) հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցների գծով առկա է արժեզրկման հայտանիշ: Ինչպես նկարագրված է ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություն 12-ում, Ընկերության հիմնական միջոցների գծով 2017 դեկտեմբերի 31-ին ավարտված տարում ճանաչվել է 6.2 միլիարդ դրամ գումարի չափով արժեզրկում:

Մենք անկարող էինք ձեռք բերել բավականաչափ և համապատասխան աուդիտորական ապացույցներ նշված արժեզրկման գնահատման ճշտության վերաբերյալ, ինչպես նաև անկարող էինք ինքնուրու գնահատել հիմնական միջոցների փոխհատուցվող գումարը՝ ներառյալ արժեզրկման և մաշվածության հաշվարկի նպատակով կիրառվող օգտակար ծառայության ժամկետների գնահատականները հաշվետու ամսաթվի դրությամբ՝ Ընկերության հիմնական միջոցների և գործունեության առանձնահատկությունների պատճառով: Հետևաբար մենք անկարող էինք որոշել հաշվետու ամսաթվի դրությամբ հիմնական միջոցների գծով հնարավոր արժեզրկման գումարը:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված պաշարների կազմում առկա են 3.0 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով պաշարներ, որոնց շարժի վերլուծությունը վկայում է այն մասին, որ կարող է անհրաժեշտ լինել դրանց ինքնարժեքի նվազեցումը մինչև իրացման գույք արժեք:

Ընկերության ղեկավարությունը չի իրականացրել նշված պաշարների իրացման գույք արժեքի գնահատում, հետևաբար մենք անկարող էինք ձեռք բերել բավականաչափ և համապատասխան աուդիտորական ապացույցներ նշված պաշարների արժեքի և համապատասխան ծախսերի գումարի վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի Էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍ կանոնագիրք) և պահպանել ենք Էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍ կանոնների:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության

անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ ամկա է Էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի հաշվետվությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևավորել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանն դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառում:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Դեկլարությանը և կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Եզրակացություն իրավական այլ պահանջներին համապատասխանելու վերաբերյալ

Համաձայն Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Վերակառուցման և Չարգացման Միջազգային Բանկի (ՎՉՄԲ) միջև 2016թ. մայիսի 12-ին ստորագրված 8615-AM Վարկային համաձայնագրի 2-րդ բաժնի C.2.a.(vi) կետի, և ՀՀ Ֆինանսների նախարարության և Ընկերության միջև 2016թ. հունիսի 22-ին ստորագրված ենթավարկային համաձայնագրի 4.14 կետի, Ընկերությունը պարտավորվել է չկրել որևէ ծախս, պարտք կամ պարտավորություն, և չտրամադրել վարկեր կամ դրամաշնորհներ Ընկերության հիմնական գործունեության՝ Էներգիայի արտադրության հետ չկապված նպատակների համար:

Մեր կարծիքով, 2023 դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Ընկերությունը պահպանել է նշված վավերապայմանը:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Սահակյան, FCCA

Տնօրեն

22 Ապրիլ 2024

Երևան



Սերգեյ Յակովլև, FCCA

Աուդիտի գործընկեր

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
 Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծան.	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Հասույթ	5	42,685,488	40,552,769
Վաճառքի ինքնարժեք	6	(43,529,552)	(39,391,095)
Համախառն (վնաս)/եկամուտ		(844,064)	1,161,674
Այլ եկամուտ	7	2,976,853	2,168,686
Վարչական ծախսեր	8	(1,877,417)	(1,814,977)
Այլ գործառնական ծախսեր	9	(514,817)	(857,784)
Գործառնական (վնաս)/ շահույթ		(259,445)	657,599
Ֆինանսական եկամուտ	10	2,538,596	2,604,720
Ֆինանսական ծախսեր	10	(5,011,295)	(5,598,470)
Փոխարժեքային տարբերություններից զուտ (կորուստ)/ օգուտ		(1,450,049)	12,540,397
(Վնաս) /Շահույթ մինչև հարկումը		(4,182,193)	10,204,246
Շահութահարկի գծով ծախս	11	(97,992)	(8,010)
Տարվա (վնաս)/շահույթ		(4,280,185)	10,196,236
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(4,280,185)	10,196,236

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Ընկերության ղեկավարության կողմից 2024թ. ապրիլի 22-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Էդուարդ Մարտիրոսյան
 Գլխավոր տնօրեն



Էմիլ Նիկողոսյան
 Գլխավոր հաշվապահ

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծան	31.12.2023թ. հազ.դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	12	98,414,213	115,472,376
Ոչ նյութական ակտիվներ		80,898	80,922
Ոչ ընթացիկ կանխավճարներ		2,909,257	5,341,858
Այլ ֆինանսական ակտիվներ		41,423	41,804
		101,445,791	120,936,960
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	13	24,780,098	23,084,052
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	14	6,471,948	6,004,646
Բանկային ավանդներ	15	5,063,688	24,507,265
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		17,022,200	5,648
		53,337,934	53,601,611
Ընդամենը ակտիվներ		154,783,725	174,538,571
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	16	76,989,494	90,883,067
Ակտիվներին վերաբերող շնորհներ	17	7,608,303	9,147,143
Յետաձգված հարկային պարտավորություններ	11	1,594,592	1,496,600
		86,192,389	101,526,810
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	16	12,883,418	12,190,153
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	18	15,735,965	16,525,580
Կուտակված արձակուրդային օրերի գծով պահուստ		1,444,220	1,488,110
		30,063,603	30,203,843
Ընդամենը պարտավորություններ		116,255,992	131,730,653
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ		16,662,404	16,662,404
Պահուստային կապիտալ		954,943	954,943
Լրացուցիչ կապիտալ		1,585,206	1,585,206
Կուտակված շահույթ		19,325,180	23,605,365
Ընդամենը սեփական կապիտալ	19	38,527,733	42,807,918
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		154,783,725	174,538,571

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2024թ. ապրիլի 22-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Էդուարդ Մարտիրոսյան
Գլխավոր տնօրեն

Էմիլ Նիկողոսյան
Գլխավոր հաշվապահ



(Handwritten signature)

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծան	2023թ. հազ.դրամ	2022թ. հազ.դրամ
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր			
Իրացումից մուտքեր		51,407,124	46,977,117
Այլ մուտքեր		981,803	99,415
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ		(5,982,067)	(5,698,743)
Մատակարարներին և այլ կրեդիտորներին վճարված դրամական միջոցներ		(18,178,857)	(10,901,740)
Վճարված հարկեր և պարտադիր վճարներ		(8,605,839)	(8,387,377)
Այլ վճարումներ		(539,404)	(471,646)
Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսք		19,082,760	21,617,026
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր			
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերումից ելքեր		(4,425,912)	(9,603,810)
Ավանդների մարում, զուտ		2,726,619	1,656,289
Ստացված տոկոսային եկամուտ		19,255,955	2,485,706
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		17,556,662	(5,461,815)
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր			
Վարկերի և փոխառությունների մարում	16	(14,107,378)	(10,434,884)
Վճարված տոկոսներ	16	(5,519,844)	(5,740,146)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		(19,627,222)	(16,175,030)
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր		17,012,200	(19,819)
Դրամական միջոցների գծով փոխարժեքային տարբերություններ		4,352	(682)
Դրամական միջոցների մնացորդն առ 1 հունվարի		5,648	26,149
Դրամական միջոցների մնացորդն առ 31 դեկտեմբերի		17,022,200	5,648

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2024թ. ապրիլի 22-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Էդուարդ Մարտիրոսյան
 Գլխավոր տնօրեն



Էմիլ Նիկողոսյան
 Գլխավոր հաշվապահ

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ

Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ


	Բաժնետիրական կապիտալ հազ. դրամ	Պահուստային կապիտալ հազ. դրամ	Լրացուցիչ կապիտալ հազ. դրամ	Կուտակված շահույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
Մնացորդ առ 1 հունվարի 2022թ	16,662,404	954,943	1,585,206	13,409,129	32,611,682
Տարվա վնաս	-	-	-	10,196,236	10,196,236
Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2022թ.	16,662,404	954,943	1,585,206	23,605,365	42,807,918
Մնացորդ առ 1 հունվարի 2023թ	16,662,404	954,943	1,585,206	23,605,365	42,807,918
Տարվա վնաս	-	-	-	(4,280,185)	(4,280,185)
Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2023թ.	16,662,404	954,943	1,585,206	19,325,180	38,527,733

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2024թ. ապրիլի 22-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Էդուարդ Մարտիրոսյան
գլխավոր տնօրեն




Էմիլ Աիկողոսյան
գլխավոր հաշվապահ



«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

1. Ընկերության մասին	2
2. Պատրաստման հիմունքներ.....	3
3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ.....	6
4. Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում.....	7
5. Հասույթ	11
6. Վաճառքի ինքնարժեք.....	12
7. Այլ եկամուտ	12
8. Վարչական ծախսեր	13
9. Այլ գործառնական ծախսեր	13
10. Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր	13
11. Շահութահարկի գծով փոխհատուցում	14
12. Հիմնական միջոցներ.....	16
13. Պաշարներ.....	18
14. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	18
15. Բանկային ավանդներ.....	19
16. Վարկեր և փոխառություններ.....	20
17. Ակտիվներին վերաբերող շնորհներ	23
18. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	23
19. Սեփական կապիտալ	23
20. Կապակցված կողմերի միջև գործարքներ	24
21. Պայմանական պարտավորություններ	24
22. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր.....	25
23. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն	25
Հավելված Ա - ՖՀՄՍ 13 Իրական արժեքի չափման բացահայտումներ	30

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

1. Ընկերության մասին

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերությունը (Ընկերություն) ստեղծվել է 1994թ. հոկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի և վառելիքի նախարարության Հայկական ատոմային էլեկտրակայան» ՀԼԶՊ փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորելու մասին թիվ 492 որոշման հիման վրա:

Ընկերությունը գրանցվել է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Արմավիրի շրջանային բաժանմունքում 1996թ. հուլիսի 29-ին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Ընկերության բաժնետոմսերի 100%-ը պատկանում է ՀՀ Կառավարությանը:

Ընկերությունը գործում է հետևյալ լիցենզիաներով՝

- Էլեկտրաէներգիայի և հզորության արտադրության լիցենզիա, որը տրվել է 1999թ. հունիսի 21-ին Հայաստանի Հանրապետության Էներգետիկ հանձնաժողովի կողմից, վավեր է մինչև 2024թ. հունիսի 10-ը,
- Միջուկային տեղակայանքների շահագործման լիցենզիա, որը տրվել է 2011թ. ապրիլի 1-ին Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կողմից, վավեր է մինչև 2031թ. ապրիլի 1-ը,
- Ռադիոակտիվ նյութերի ներմուծման լիցենզիա, որը տրվել է 2006թ. փետրվարի 17-ին Հայաստանի հանրապետության Կառավարությանն առընթեր Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կողմից, վավեր է մինչև 2026թ. փետրվարի 17-ը,
- Ռադիոակտիվ նյութերի օգտագործման լիցենզիա, որը տրվել է 2006թ. մայիսի 4-ին Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կողմից, վավեր է մինչև 2026թ. մայիսի 4-ը:
- Գործունեության ապահովման հետ կապված այլ անհրաժեշտ լիցենզիաներ:

Ընկերության գործունեությունը, այդ թվում սակագների քաղաքականությունը, կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից:

ՀՀ Կառավարության՝ 1996թ. ապրիլի 4-ի թիվ 98 որոշման համաձայն Ընկերությունը հանդիսանում է միջուկային տեղակայանքի շահագործող և գործում է ատոմային էներգիայի ոլորտին վերաբերող միջազգային պայմանագրերի համաձայն, որոնք վավերացվել են Հայաստանի հանրապետության կողմից:

Կանոնադրության համաձայն Ընկերության հիմնական գործունեությունն ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անվտանգ և արդյունավետ շահագործումն է, ինչպես նաև էլեկտրաէներգիայի արտադրությունը, վաճառքն ու արտահանումը:

Ընկերության արտադրական հզորությունները ներառում են երկու էներգաբլոկ: Համաձայն ԽՍՀՄ Նախարարների խորհրդի որոշման՝ 1989թ. անվտանգության նկատառումներով երկու էներգաբլոկների շահագործումը դադարեցվել է: 1993թ. ՀՀ Կառավարությունը որոշում է ընդունել վերսկսել ատոմակայանի գործունեությունը, որի նպատակով մշակվել են հայեցակարգեր և անվտանգության միջոցառումների անհրաժեշտ գործողությունների ցանկ: 1995թ. նոյեմբերի 5-ին վերսկսել է թիվ 2 էներգաբլոկի գործունեությունը:

Ներկայումս Ընկերությունն իրականացնում է երկու ծրագիր.

- Թիվ 2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման ծրագիր, համաձայն Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կառավարությունների միջև 2015թ. փետրվարի 5-ին կնքված պայմանագրի և Ընկերության և Ֆինանսների նախարարության միջև 2020թ. հուլիսի 10-ին կնքված վարկային պայմանագրի:
- Էներգետիկ հատվածի ֆինանսական վերականգնման ծրագիր, որը ֆինանսավորվում է Վերակառուցման և Չարգացման Միջազգային բանկի կողմից 2016թ. մայիսի 16-ին կնքված համար 8615-AM վարկային պայմանագրի միջոցներով: Ծրագրի նպատակն է էներգիա արտադրող պետական ընկերությունների և էներգիայի բաշխման մասնավոր ընկերության ֆինանսական

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

վիճակի բարելավման միջոցով աջակցել Հայաստանի հանրապետության ջանքերը էլեկտրաէներգիայի համապատասխան և հուսալի մատակարարումը պահպանելու հարցում:

Ընկերությունն արտադրում է Հայաստանի Հանրապետությունում սպառվող էլեկտրաէներգիայի մինչև 40%-ը:

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1,564 աշխատակից (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,567 աշխատակից):

Գործարար միջավայր

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ՝ ենթարկվելով մի քանի մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչն, ի թիվս այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Հայաստանի Հանրապետության տնտեսական միջավայրի վրա էական ազդեցություն ունի նաև Ռուսաստանի Դաշնությունում գործարար ակտիվության մակարդակը, քանի որ Ռուսաստանի Դաշնությունից դրամական միջոցների զգալի հոսքեր կան դեպի ՀՀ: Ուստի, տարածաշրջանում քաղաքական լարվածությունը, միջազգային պատժամիջոցները, արժեթղթերի շուկայի անկայունությունը, սուր գնաճը և Ռուսաստանի Դաշնության առջև ծառայած այլ ռիսկերը կարող են բացասաբար անդրադառնալ ՀՀ տնտեսության վրա:

Հայաստանի տնտեսությունը հաջողությամբ դիմակայել է համաշխարհային տնտեսական ցնցումներին և կարողացել է և 2022թ.-ին, և 2023թ.-ին գրանցել տպավորիչ մակրոտնտեսական ցուցանիշներ՝ հիմնականում զբոսաշրջության, մի շարք ընկերությունների Հայաստան տեղափոխվելու և դրամական փոխանցումների նշանակալի աճի շնորհիվ: Նշված բոլոր գործոնները հանգեցրել են ՀՆԱ-ի 8.7% աճի 2023թ-ին: Կառավարության 2021-2026թթ. տնտեսական ծրագիրը նպատակ ունի խթանել արտահանմանը միտված և ներդրումների վրա հիմնված աճի մոդելը լայնածավալ բարեփոխումների միջոցով:

Այսպիսի գործարար միջավայրն էական ազդեցություն ունի Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Ընկերությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ Ընկերության գործունեության կայունությունն ապահովելու նպատակով, այդուհանդերձ, ելնելով իրադարձությունների զարգացման անկանխատեսելիությունից, Դեկավարությունը հնարավորություն չունի արժանահավատ գնահատական տալ, թե նման հանգամանքները ինչ ազդեցություն կունենան Ընկերության հետագա տարիների ֆինանսական վիճակի վրա: Ներկայիս տնտեսական իրավիճակի հետագա հետևանքները և Կառավարության ձեռնարկվելիք միջոցառումները դժվար է կանխատեսել, և Ընկերության դեկավարության ներկայիս ակնկալիքները և գնահատականները կարող են տարբերվել փաստացի արդյունքներից:

2. Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) և Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների՝ իրապարակված Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից, և Մեկնաբանությունների համաձայն (միասին՝ ՖՀՄՍ ստանդարտներ):

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 23-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության գործառնական արժույթը: Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

ՖՅՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիման վրա բացառությամբ բաժնետոմսերում ներդրումները, որոնք չափվել են իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

(ա) Երբ և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ

Ընկերությունը առաջին անգամ կիրառել է ստանդարտներում կատարված որոշակի փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Ընկերությունը դեռևս չի ընդունել որևէ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որը հրապարակվել է, բայց դեռևս ուժի մեջ չի մտել:

ՖՅՄ 17 Ապահովագրական պայմանագրեր

2017թ. Մայիսին ՀՀՄՍԽ-ն թողարկեց ՖՅՄ 17 “Ապահովագրության պայմանագրեր” , համապարփակ հաշվապահական հաշվառման նոր ստանդարտը, որը նախատեսված է ապահովագրական պայմանագրերի համար: “Ապահովագրության պայմանագրեր” ՖՅՄ 17-ը սկզբունքներ է սահմանում սույն ստանդարտի գործողության ոլորտում գտնվող ապահովագրության պայմանագրերի ճանաչման, չափման, ներկայացման և բացահայտման համար: ՖՅՄ 17-ը կփոխարինի ՖՅՄ 4 “Ապահովագրության պայմանագրեր” ստանդարտին, որը թողարկվել է 2005թ.: ՖՅՄ 17-ը կիրառելի է ապահովագրական պայմանագրերի բոլոր տեսակներին (ներառյալ՝ կյանքի ապահովագրություն, ոչ կյանքի ապահովագրություն, ուղղակի ապահովագրություն և վերաապահովագրություն), անկախ ապահովագրություն տրամադրող կազմակերպության տեսակից:

ՖՅՄ 17-ը նաև կիրառելի է որոշակի երաշխիքների և հայեցողական մասնակցության հատկանիշներով ֆինանսական գործիքների դեպքում: Կիրառելի են որոշակի բացառություններ: ՖՅՄ 17-ը սահմանում է հաշվապահական հաշվառման նոր պահանջներ ապահովագրական հատկանիշներով բանկային պրոդուկտների նկատմամբ: Այս պահանջները կարող են ազդել, թե որ գործիքները կամ դրանց բաղադրիչները կներառվեն ՖՅՄ 9-ի կամ ՖՅՄ 17-ի շրջանակներում Վարկային քարտեր և համանման ապրանքներ, որոնք ապահովագրական ծածկույթ են ապահովում թողարկողներից շատերը կարող են շարունակել կիրառել առկա հաշվապահական մոտեցումը՝ որպես ՖՅՄ 9-ի համաձայն ֆինանսական գործիք:

ՖՅՄ 17-ը իր շրջանակից բացառում է վարկային քարտերի պայմանագրերը (և այլ նմանատիպ պայմանագրերը, որոնք տրամադրում են կրեդիտային կամ վճարային պայմանավորվածություններ), որոնք համապատասխանում են ապահովագրության պայմանագրի սահմանմանը, միայն այն դեպքում, եթե կազմակերպությունը հաճախորդի հետ պայմանագրի գինը սահմանելիս չի արտացոլում ֆիզիկական անձի հետ կապված ապահովագրական ռիսկի գնահատումը:

Երբ ապահովագրական ծածկույթը տրամադրվում է որպես վարկային քարտի պայմանագրային պայմանների մաս, թողարկողը պարտավոր է՝

- Առանձնացնել ապահովագրության ծածկույթը և դրա նկատմամբ կիրառելի ՖՅՄ 17,
- Այլ բաղադրիչների նկատմամբ գործադրել այլ կիրառելի ստանդարտներ (Օրինակ է ՖՅՄ 9, ՖՅՄ 15, Հասույթ գնորդների հետ պայմանագրերից կամ ՀՀՄՍ 37, Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ:

Վարկային պայմանագրերը, որոնք համապատասխանում են ապահովագրության սահմանմանը, բայց ապահովագրական իրադարձությունների փոխհատուցումը սահմանափակում են այն չափով, որն այլապես պահանջվում է ապահովագրի՝ պայմանագրով նախատեսված պարտավորությունը

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

մարելու համար: Այդպիսի վարկերի թողարկողները, օրինակ՝ մահվան հրաժարմամբ վարկերը, ունեն տարբերակ կիրառելու ՖՀՄՍ 9-ը կամ ՖՀՄՍ 17-ը: Ընտրությունը կատարվում է պորտֆելի մակարդակով և համարվում է անփոփոխ:

ՖՀՄՍ 17-ը ուժի մեջ է մտնում 2023թ.-ի հունվարի 1-ից սկսվող կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար՝ պահանջելով համեմատելի տվյալներ: Վաղ կիրառումը թույլատրելի է այն պայմանով, որ կազմակերպությունը նաև կիրառում է ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 15, ՖՀՄՍ 17 առաջին անգամ կիրառելու ամսաթվից ի վեր կամ դրանից առաջ:

Փոփոխություններ ՌՅՄՍ 1-ում. Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ

2020 թ. հունվարին ՌՅՄՍ-ն փոփոխություններ է հրապարակել ՌՅՄՍ 1-ի 69-ից 76 պարբերություններում՝ պարտավորությունները որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգելու պահանջները հստակեցնելու համար: Փոփոխությունները պարզաբանում են.

- Ինչ է նշանակում մարումը հետաձգելու իրավունք,
- Որ հետաձգելու իրավունքը պետք է գոյություն ունենա հաշվետու ժամանակաշրջանի ավարտին
- Որ դասակարգման վրա չի ազդում կազմակերպության՝ հետաձգելու իրավունքը օգտագործելու հավանականությունը
- Որ միայն այն դեպքում, երբ փոխարկելի պարտավորության մեջ ներդրված ածանցյալ գործիքն ինքնին հանդիսանում է բաժնային գործիք, ապա պարտավորության պայմանները չեն ազդի դրա դասակարգման վրա:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023 թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և պետք է կիրառվի հետադարձ ուժով:

Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում - Փոփոխություններ ՌՅՄՍ 8 ստանդարտում

2021 թվականի փետրվարին ՌՅՄՍ-ն փոփոխություններ է հրապարակել ՌՅՄՍ 8-ում, որտեղ ներկայացված է «հաշվապահական հաշվառման գնահատումների» սահմանումը: Փոփոխությունները պարզաբանում են հաշվապահական հաշվառման գնահատումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների և սխալների ուղղման տարբերությունը: Ինչպես նաև, դրանք պարզաբանում են, թե ինչպես են կազմակերպությունները օգտագործում չափման հիմունքները և ելակետային տվյալները՝ հաշվապահական հաշվառման գնահատումներ մշակելու համար:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և կիրառվում են հաշվապահական հաշվառման քաղաքականության և հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունների նկատմամբ, որոնք տեղի են ունենում այդ ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո:

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում - Փոփոխություններ ՌՅՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում

2021թ.-ի փետրվարին ՌՅՄՍ-ն հրապարակել է փոփոխություններ ՌՅՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում (Եականության մասին դատողությունների կիրառում), որտեղ ներկայացված են ուղղեցույցներ և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառել հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների վերաբերյալ Եականության դատողությունները: Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին ներկայացնել հաշվապահական հաշվառման քաղաքականության առավել օգտակար բացահայտումները՝ փոխարինելով «նշանակալի» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջը «Եական» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջով և ավելացնելով ուղղեցույց այն մասին, թե կազմակերպություններն ինչպես պետք է կիրառեն Եականության հայեցակարգը հաշվապահական հաշվառման

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

քաղաքականությունների բացահայտման վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

ՀՀՄՍ 1-ի փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ թույլատրելով վաղաժամկետ կիրառումը: Քանի որ Գործնական Ցուցումներ 2-ի փոփոխությունները ներկայացնում են հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվության էականության սահմանման կիրառման ոչ պարտադիր ուղեցույց, այս փոփոխությունների համար ուժի մեջ մտնելու ամսաթվի սահմանման անհրաժեշտություն չկա:

Մեկ գործարքից առաջացած ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)

2021 թվականի մայիսին հորիզոնող հրապարակեց ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները, որոնք նեղացնում են ՀՀՄՍ 12-ի համաձայն նախնական ճանաչման բացառման շրջանակը, այն այլևս չի կիրառվում այն գործարքների մասով, որոնք հանգեցնում են հավասարապես հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների: Փոփոխությունները պետք է կիրառվեն այն գործարքների համար, որոնք տեղի են ունենում ներկայացված ամենավաղ համեմատական ժամանակաշրջանի սկզբում կամ դրանից հետո: Ինչպես նաև, ներկայացված ամենավաղ համեմատական ժամանակաշրջանի սկզբում պետք է ճանաչվեն նաև հետաձգված հարկային ակտիվը (եթե առկա է բավարար հարկվող շահույթ) և հետաձգված հարկային պարտավորությունը վարձակալության և ապագործարկման պարտավորությունների հետ կապված բոլոր նվազեցվող և հարկվող ժամանակավոր տարբերությունների համար:

Այս փոփոխությունները ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

(բ) Հրապարակված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ

Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2024 թվականի հունվարի 1-ից սկսած ժամանակաշրջանի համար.

- Վաճառքի և վարձակալության վերադարձի պարտավորություն (Փոփոխություններ ՀՀՄՍ 16-ում Վարձակալություն),
- Պարտավորությունների դասակարգում որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում),
- Քովենանտներով ոչ ընթացիկ պարտավորություններ (ՀՀՄՍ 1-ի Փոփոխություններ, Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում), և
- Մատակարարների ֆինանսական պայմանավորվածություններ (Փոփոխություններ ՀՀՄՍ 7-ի, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն և ՀՀՄՍ 7 Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ):

Ընկերությունը ներկայումս գնահատում է այս նոր հաշվապահական ստանդարտների և փոփոխությունների ազդեցությունը: Ընկերությունը չի հավատում, որ ՀՀՄՍ 1-ի փոփոխությունները էական ազդեցություն կունենան իր պարտավորությունների դասակարգման վրա: Ընկերությունը չի ակնկալում, որ IASB-ի կողմից թողարկված այլ ստանդարտներ, որոնք դեռ կիրառության մեջ չեն մտել, էական ազդեցություն կունենան Ընկերության վրա:

3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ (Ծանոթագրություն 23)

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում ներկայումս իրականացվող՝ ատոմակայանի շահագործման ժամկետի երկարացման ծրագրի հիման վրա, համաձայն որի ատոմակայանի շահագործման ժամկետը կերկարացվի ևս 10 տարով, ծրագրի մեկնարկի պահից: Եթե կայանի շահագործման ժամկետը իրականում երկարացվի ավելի քան 10 տարով, հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները կտարբերվեն ընթացիկ գնահատումներից, ինչը կարող է էական ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա:

Պաշարների արժեզրկման պահուստ (Ծանոթագրություն 13)

Ընկերության յուրաքանչյուր տարվա վերջում գնահատում և ճանաչում է արժեզրկման հայտանիշ ունեցող պաշարների, մասնավորապես դանդաղաշարժ կամ հետագա օգտագործման համար ոչ պիտանի պաշարների գծով, արժեզրկման գումարը:

Իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Ընկերության ֆինանսական հաշվետվություններում:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի հիերարխիա»):

- *Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճգրտված)*
- *Մակարդակ 2: Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից*
- *Մակարդակ 3: Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)*

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

4. Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույթային ռիսկ
- Արտարժույթային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Ընկերության նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել (եթե այլ բան սահմանված չէ):

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ռիսկեր, ներկայացված են ստորև.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

- Առևտրային դեբիտորական պարտքեր
- Բանկային ավանդներ
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ
- Այլ ֆինանսական ակտիվներ
- Վարկեր և փոխառություններ
- Առևտրային կրեդիտորական պարտքեր

(բ) Ֆինանսական գործիքներ ըստ խմբերի

Ֆինանսական ակտիվներ	Ամորտիզացված արժեքով չափվող	
	31/12/2023	31/12/2022
	հազար դրամ	հազար դրամ
Բանկային ավանդներ	5,063,688	24,507,265
Առևտրային դեբիտորական պարտքեր	5,654,950	5,867,031
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	17,022,200	5,648
	27,740,838	30,379,944

	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող	
	31. 12. 2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Ներդրումներ բաժնետոմսերում	41,423	41,804
	41,423	41,804

Ֆինանսական պարտավորություններ	Ամորտիզացված արժեքով չափվող	
	31. 12. 2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Վարկեր և փոխառություններ	89,872,912	103,073,220
Առևտրային կրեդիտորական պարտքեր	14,091,493	15,217,868
	103,964,405	118,291,088

(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են առևտրային դեբիտորական պարտքերը, բանկային ավանդները, դրամական միջոցները և դրանց համարժեքները, վարկերը և փոխառությունները, առևտրային կրեդիտորական պարտքերը:

Առևտրային դեբիտորական պարտքերի, բանկային ավանդների, դրամական միջոցների և դրանց համարժեքների, վարկերի և փոխառությունների, առևտրային կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտավորապես հավասարվում է իրական արժեքին:

Հավելված Ա-ում ներկայացված են իրական արժեքի հիերարխիայի, գնահատման մեթոդների և վարկերի ու փոխառությունների իրական արժեքի որոշման հետ կապված նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալների մանրամասներ, որոնք ընդգրկված են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ

Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացվում է Տնօրենների խորհրդի կողմից (բացառությամբ այն հարցերի որոնք վերապահված են Բաժնետերերի ընդհանուր ժողովին):

Տնօրենների խորհրդի նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ չանդրադառնալով Ընկերության մրցունակության և ճկունության վրա: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկն է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ:

Պարտքային ռիսկն առաջանում է նաև բանկերում պահվող դրամական միջոցներից, դրանց համարժեքներից և բանկային ավանդներից: Ընկերությունն իր միջոցները տեղաբաշխում է միայն հայաստանյան խոշորագույն բանկերում:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն առաջանում է Ընկերության տոկոսաբեր, առևտրային և արտարժույթային ֆինանսական գործիքներից: Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի տատանումների ռիսկն է տոկոսադրույքի (տոկոսադրույքային ռիսկ), արտարժույթային փոխարժեքի (արտարժույթային ռիսկ) կամ այլ շուկայական գործոնների (այլ շուկայական գործոնների ռիսկ) հետևանքով:

Իրական արժեքի և դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ

Ընկերության դրամական հոսքերի իրական արժեքի տատանումների ռիսկն առաջանում է փոփոխական տոկոսադրույքով երկարաժամկետ փոխառություններից: Պայմանագրային և արդյունավետ միջին տոկոսադրույքների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 18-ում:

Փոփոխական տոկոսադրույքով վարկի տոկոսադրույքի 1% բարձր/ցածր լինելու դեպքում՝ մյուս փոփոխականների հաստատուն լինելու պարագայում, Ընկերության 2023թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա զուտ շահույթը կնվազեր/կաճեր 36,154 հազար դրամով (2022թ. տարվա շահույթը կնվազեր/կաճեր 35,575 հազար դրամով):

Արտարժույթային ռիսկ

Արտարժույթային ռիսկն առաջանում է, երբ Ընկերության գործարքներն արտահայտված չեն գործառնական արժույթով:

Այլ արժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների համար Ընկերությունը հղում է կատարում ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքներին հաշվետու ամսաթվի դրությամբ, որոնք ներկայացված են ստորև (արտարժույթի մեկ միավորի արժեք արտահայտված ՀՀ դրամով).

	<u>31. 12. 2023թ.</u>	<u>31.12.2022թ.</u>
	<u>հազ. դրամ</u>	<u>հազ. դրամ</u>
1 ԱՄՆ դոլար	<u>404.79</u>	<u>393.57</u>

2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության արտարժույթային ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների ներկայացված է ստորև՝

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

ԱՄՆ դոլար

	31.12.2023թ.	31.12.2022թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	-	384
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	81	1,455,281
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	81	1,455,665
Ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	(45,691,853)	(51,232,630)
Առևտրային կրեդիտորական պարտքեր	(5,511,115)	(6,837,983)
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	(51,202,968)	(58,070,613)
Չուտ դիրքը	(51,202,887)	(56,614,948)

Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի 10% արժևորումը / (արժեզրկումը) այլ փոփոխականների հաստատուն մնալու պայմանով կհանգեցնի Ընկերության զուտ ակտիվների և տարվա ֆինանսական արդյունքի (նվազմանը)/աճին՝ 5,120,289 հազար դրամի չափով (2022թ.՝ 5,661,495 հազար դրամ), միևնույն ժամանակ:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Ընկերության գործող կապիտալի կառավարումից, ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված ռժվարությունների հետ:

Համաձայն Ընկերության քաղաքականության՝ Ընկերությունը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ: Այս առումով այն ձգտում է պահպանել բավարար դրամական միջոցներ, որպեսզի կարողանա մարել սահմանված պարտավորությունները: Դրամական միջոցների բավարարությունը նաև ապահովվում է վարկային պայմանագրերից բխող չօգտագործված վարկային միջոցների օգտագործման հաշվին (Ծանոթագրություն 16):

Ստորև ներկայացված են Ընկերության ֆինանսական պարտավորությունների (չգեղջկած պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները:

	Մինչև 3	3-ից 6	6-ից 12	1-ից 5	5 տարուց	Ընդամենը	Հաշվեկշռային արժեք
	ամիս	ամիս	ամիս	տարի	ավել	չգեղջկած պարտավորություններ	
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
Վարկեր և փոխառություններ	5,333,250	1,604,113	10,563,041	61,270,676	34,021,676	112,792,756	89,872,912
Առևտրային կրեդիտորական պարտքեր	6,280,943	-	-	7,810,550	-	14,091,493	14,091,493
	11,614,193	1,604,113	10,563,041	69,081,226	34,021,676	126,884,249	103,964,405

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

	Մինչև 3 ամիս հազ. դրամ	3-ից 6 ամիս հազ. դրամ	6-ից 12 ամիս հազ. դրամ	1-ից 5 տարի հազ. դրամ	5 տարուց ավել հազ. դրամ	Ընդամենը չգեղջկած պարտավորու- թյուններ հազ. դրամ	Հաշվեկշա- ղին արժեք հազ. դրամ
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Վարկեր և փոխառություններ Առևտրային կրեդիտորական պարտքեր	5,469,297	1,627,862	9,980,375	79,849,864	34,367,751	131,295,149	103,073,220
	7,407,318	-	-	7,810,550	-	15,217,868	15,217,868
	12,876,615	1,627,862	9,980,375	87,660,414	34,367,751	146,513,017	118,291,088

Կապիտալի կառավարում

Ընկերությունը իր կապիտալը կառավարում է՝ ապահովելու համար Ընկերության շարունակական գործունեությունը և բաժնետիրոջ շահույթը:

Ընկերության կապիտալի կառուցվածքը ներառում է փոխառու միջոցները (ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորություններ) և սեփական կապիտալը (ներառող կանոնադրական կապիտալը, պահուստները, լրացուցիչ կապիտալը և կուտակված շահույթը):

Ընկերության՝ որպես կապիտալ կառավարվող գումարները հաշվետու տարվա համար ամփոփված են ստորև.

	31. 12. 2023 թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Փոխառություններ	89,872,912	103,073,220
Հանած դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(17,022,200)	(5,648)
Հանած կարճաժամկետ բանկային ավանդներ	(5,063,688)	(24,507,265)
	67,787,024	78,560,307
Սեփական կապիտալ	38,527,733	42,807,918
Փոխառություններ/Կապիտալ հարաբերակցություն	1.8	1.8

5. Հասույթ

	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Էլեկտրաէներգիայի վաճառք	42,685,488	38,445,873
Հզորության վաճառք	-	2,106,896
	42,685,488	40,552,769
Առաքված Էլեկտրաէներգիա միլիոն կվտժ	2,724	2,631
Միջին սակագինը դրամ / կվտժ (առանց ԱԱՀ)	15.67	14.61

Ընկերության սակագները հաշվարկվում և սահմանվում են «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում ամրագրված սկզբունքների, ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ) որոշումներով հաստատված սակագների հաշվարկման մեթոդիկայի հիման վրա: Սակագները սովորաբար վերանայվում են յուրաքանչյուր տարին մեկ անգամ:

Ընկերության համար սահմանված արտադրված Էլեկտրաէներգիայի և տրամադրված հզորության սակագները 1կՎտժ-ի համար (առանց ԱԱՀ) ներկայացված են ստորև՝

Սեկնարկի ամսաթիվ	Էլեկտրաէներգիա	Հզորություն
01-02-21	4. 45	5,016. 42
01-02-22	15.92	19.105.00
01-02-23	15.44	-
01-08-23	15. 09	-

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

*2024թ. -ի փետրվարի 1-ից սահմանվել է նոր սակագին 15,138 դրամ:

2022թ. փետրվարից Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկան ամբողջովին կարգավորվող կառուցվածքից աստիճանաբար անցում է կատարել շուկայի ազատականացված կառուցվածքի՝ աստիճանաբար ներդնելով մրցակցային շուկայի բաղադրիչներ:

Այս փոփոխությունները նպատակ ունեն ապահովել նոր մասնակիցների մուտքը էլեկտրաէներգետիկական շուկա և հնարավորություն ընձեռնել սպառողներին էլեկտրական էներգիայի մատակարարի ընտրության հարցում, ինչպես նաև կնպաստեն այլ երկրների հետ էլեկտրական էներգիայի առևտրի խթանմանը:

Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման և միջպետական առևտրի խթանման ուղղությամբ իրականացված աշխատանքների շրջանակներում 2022 թվականի փետրվարի 1-ից մեկնարկել է Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի փուլային ազատականացումը և նախատեսվում է մինչև 2025 թվականի փետրվարի 1-ը ամբողջությամբ ազատականացնել:

Արդյունքում՝ էլեկտրաէներգիա արտադրող որոշ կայաններ, այդ թվում նաև «Հայկական Ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն չեն ունենա ՅԾԿՀ-ի կողմից ձևավորված սակագին, և կսկսեն վաճառել իրենց էլեկտրաէներգիան շուկայում առկա պահանջարկի և առաջարկի արդյունքում ձևավորված գնով: Նրանք կդառնան մեծածախ շուկայի մասնակիցներ, որի արդյունքում սուբյեկտները էլեկտրաէներգիան ձեռք կբերեն շուկայական պայմաններում:

2022թ. -ին դեռևս կիրառվել են ՅԾԿՀ-ի կողմից ձևավորված սակագները և շուկայի ազատականացման շրջանակներում գործարքների չեն իրականացվել:

6. Վաճառքի ինքնարժեք

	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Մաշվածություն և ամորտիզացիա	23,317,245	22,237,729
Միջուկային վառելիքի ինքնարժեք	6,879,621	8,132,930
Աշխատավարձ աշխատակիցներին	6,117,440	5,564,888
Գնված և վաճառված էլեկտրաէներգիայի ինքնարժեք	4,147,476	-
Սպասարման և վերանորոգման ծախսեր	963,835	1,333,241
Օգտագործված նյութերի արժեք	866,073	961,939
Ատոմակայանի շահագործման վճար	400,000	400,000
Անվտանգություն	399,184	399,185
Գազ և էլեկտրաէներգիա	406,674	337,632
Այլ ծախսեր	32,004	23,551
	43,529,552	39,391,095

7. Այլ եկամուտ

	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Եկամուտ շնորհներից (Ծան. 17)	1,889,094	1,861,948
Պայմնագրային երաշխիքային գումարի ստացումից եկամուտ	579,645	-
Եկամուտներ տույժերից և տուգանքներից	256,515	169,059
Պաշարների ճանաչում լուծարված հիմնական միջոց	6,315	62,909
Պաշարների արժեքների փոփոխությունից եկամուտներ	22,416	27,533
Գործառնական վարձակալությունից եկամուտ	10,446	12,484
Այլ եկամուտներ	212,422	34,753
	2,976,853	2,168,686

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

8. Վարչական ծախսեր

	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Հատուցումներ աշխատակիցներին	1,625,939	1,558,715
Պարտադիր վճարներ	61,828	59,822
Մաշվածություն և ամորտիզացիա	48,396	56,185
Ապահովագրական վճարներ	29,905	31,154
Գործուղման ծախսեր	18,070	18,433
Փոստային և հաղորդակցման ծառայություններ	11,362	17,354
Այլ	81,917	73,314
	1,877,417	1,814,977

9. Այլ գործառնական ծախսեր

	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Մաշվածություն և ամորտիզացիա	247,966	30,241
Անդամակցության վճարներ	84,945	110,291
Արհմիության ծախսեր	63,574	65,612
		63,494
Հատուցումներ աշխատակիցներին	54,964	
Հիմնական միջոցների դուրսգրում	27,828	516,252
		-
Դատական ծախսեր	7,414	24,751
Վճարներ տուգանքներից	853	499
Հարկեր և տուրքեր	1,241	
Արժեզրկման ծախսեր	-	-
		46,644
Այլ ծախսեր	26,032	
	514,817	857,784

10. Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր

	2023թ. հազ.դրամ	2022թ. հազ.դրամ
Տոկոսային եկամուտ բանկային ավանդներից	1,759,823	2,604,720
Տոկոսային եկամուտ բանկային հաշիվներից	778,773	-
Ընդամենը ֆինանսական եկամուտ	2,538,596	2,604,720
Տոկոսային ծախսեր ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված վարկերի և փոխառությունների գծով	(5,011,295)	(5,598,470)
Ընդամենը ֆինանսական ծախսեր	(5,011,295)	(5,598,470)
	(2,472,699)	(2,993,750)

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

11. Շահութահարկի գծով փոխհատուցում

	2023թ.	2022թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Ժամանակավոր տարբերությունների գծով հարկային ծախս	97,992	8,010
Ընդամենը շահութահարկի գծով հարկային ծախս	97,992	8,010

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույթաչափը 18% է (2022թ.՝ 18%):

Արդյունավետ տոկոսադրույթի համադրում

	2023թ.		2022թ.	
	հազ. դրամ	Արդյունավետ հարկային դրույթաչափ %	հազ. դրամ	Արդյունավետ հարկային դրույթաչափ %
(Վնաս)/ Շահույթ հարկումից առաջ	(4,182,193)		10,204,246	
Շահութահարկի գծով (փոխհատուցում)/ծախս՝ սահմանված դրույթաչափով	(752,795)	(18.0)%	1,836,764	18.0%
Հարկային նպատակով չնվազեցվող ծախսեր, զուտ	631,955	(15.11)%	(1,828,754)	(18.08%)
Հարկային վնասի հետաձգված ակտիվի դուրսգրում	218,832	(5.23)%	-	-
Ժամանակաշրջանի շահութահարկի գծով ծախս/ (փոխհատուցում)	97,992	(2.34)%	8,010	(0.08)%

Հետաձգված հարկային պարտավորությունների, շահույթում կամ վնասում ճանաչված գումարների և այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված գումարների մանրամասները ներկայացված են ստորև.

	2023թ. հունվարի 1-ի դրությամբ	(Հաշվեգրված)/ նվազեցված շահույթի կամ վնասի հաշվին հազ. դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Հիմնական միջոցներ	(1,940,940)	(86,056)	(2,026,996)
Պաշարներ	176,480	(4,036)	172,444
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	267,860	(7,900)	259,960
Հարկային վնաս	-	218,832	218,832
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(1,496,600)	120,840	(1,375,760)
Հարկային ակտիվի ապաճանաչում	-	(218,832)	(218,832)
ճանաչված հետաձգված հարկային պարտավորություն	(1,496,600)	(97,992)	(1,594,592)

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

	2022թ. հունվարի 1-ի դրությամբ հազ. դրամ	(Հաշվեգրված)/ նվազեցված շահույթի կամ վնասի հաշվին հազ. դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հազ. դրամ
Հիմնական միջոցներ	(1,951,258)	10,318	(1,940,940)
Պաշարներ	176,480	-	176,480
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	286,188	(18,328)	267,860
	(1,488,590)	(8,010)	(1,496,600)

Կուտակված վնասի մասով հետաձգված հարկային ակտիվ չի ճանաչվել, քանի որ հավանական չէ հետագա տարիների հարկային շահույթի առկայություն, որը բավարար կլինի օգտագործելու հարկային վնասը:

Ստորև ներկայացվում է Ընկերության չճանաչված հարկային վնասի գործողության ժամկետներ.

Առաջացման տարի	Գործողության ժամկետ	Հարկային վնաս հազ. դրամ	Չճանաչված հետաձգված հարկային ակտիվ հազ. դրամ
2020թ.	31/12/2025	3,027,649	544,977
2021թ.	31/12/2026	8,396,830	1,511,429
2022թ.	31/12/2027	34,035	6,126
2023թ.	31/12/2028	1,215,736	218,332

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

12. Հիմնական միջոցներ

	Հող	Շենք Շինություն	Փոխանցող հարմարանք	Մեքենա Սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ, արտադրատնտեսակ ան գույք և այլն	Անավարտ շինարարություն	Ընդամենը
Հազ. դրամ							
<i>Սկզբնական արժեք</i>							
1 հունվարի 2022թ.	7,612,620	22,716,732	8,675,918	167,327,254	7,704,269	16,646,364	230,683,157
Ավելացումներ	-	249,278	546	3,587,344	763,764	257,191	4,858,123
Օտարումներ/դուրսգրումներ	-	(16,299)	(837)	(2,215,360)	(75,444)	(208)	(2,308,148)
Վերադասակարգումներ պաշարներից/ (պաշարների ներքին շարժեր	-	-	-	(2,455,650)	-	(76,553)	(2,532,203)
	-	466,912	-	5,258,131	(458,699)	(5,266,344)	-
31 դեկտեմբերի 2022թ.	7,612,620	23,416,623	8,675,627	171,501,719	7,933,890	11,560,450	230,700,929
Ավելացումներ	-	653,690	9,520	2,963,677	657,929	2,276,285	6,561,101
Օտարումներ/դուրսգրումներ	-	(19,196)	-	(130,939)	(2,902)	(22,084)	(175,121)
Ներքին շարժեր	-	382,139	-	266,516	133,566	(782,221)	-
31 դեկտեմբերի 2023թ.	7,612,620	24,433,256	8,685,147	174,600,973	8,722,483	13,032,430	237,086,909

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Հազ. դրամ Կուտակված մաշվածություն և արժեզրկում	Հոդ	Շենք Շինություն	Փոխանցող հարմարանք	Մեքենա Սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ, արտադրատնտեսակ ան գույք և այլն	Անավարտ շինարարություն	Ընդամենը
1 հունվարի 2021թ.	-	17,414,089	6,635,077	64,436,673	6,065,351	172,969	94,724,159
Տարվա հաշվարկ	-	1,203,077	404,372	20,469,517	219,117	-	22,296,083
Օտարումներ/դուրսգրումներ	-	(15,973)	(837)	(1,712,684)	(62,195)	-	(1,791,689)
Վերադասակարգումներ պաշարներից/(պաշարների)	-	-	-	-	-	-	-
Ներքին շարժեր	-	-	-	212,067	(212,067)	-	-
31 դեկտեմբերի 2022թ.	-	18,601,193	7,038,612	83,405,573	6,010,206	172,969	115,228,553
Տարվա հաշվարկ	-	1,192,235	404,686	21,526,444	467,712	-	23,591,077
Օտարումներ/դուրսգրումներ	-	(15,369)	-	(128,659)	(2,906)	-	(146,934)
Ներքին շարժեր	-	-	-	-42,159	42,159	-	-
31 դեկտեմբերի 2023թ.	-	19,778,059	7,443,298	104,761,199	6,517,171	172,969	138,672,696
Չուտ հաշվեկշռ. արժեք							
1 հունվարի 2022թ.	7,612,620	5,302,643	2,040,841	102,890,581	1,638,918	16,473,395	135,958,998
31 դեկտեմբերի 2022թ.	7,612,620	4,815,430	1,637,015	88,096,146	1,923,684	11,387,481	115,472,376
31 դեկտեմբերի 2023թ.	7,612,620	4,655,197	1,241,849	69,839,774	2,205,312	12,859,461	98,414,213

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Անավարտ շինարարությունը ներառում է ԹԻՎ 2 Էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների արժեք, կապված ծրագրի կառավարման, Էներգաբլոկի համակարգերի և բացադրիչների մնացորդային ռետուրսների գնահատման, ինչպես նաև որոշակի սարքավորումների արժեք: 2014թ. մարտի 27-ին ՀՀ կառավարությունը վավերացրել է ատոմակայանի թիվ 2 Էներգաբլոկի շահագործման ժամկետը 10 տարով երկարաձգելու ծրագիրը: Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 1-ում, ՀՀ Կառավարության և ՌԴ Կառավարության միջև 2015թ. փետրվարի 5-ին կնքվել է պայմանագիր վերոնշյալ ծրագիրը ֆինանսավորելու նպատակով: Ծրագիրն իրականացվում և կառավարվում է «Ռոսատոմ Սերվիս» ԲԸ-ի կողմից: Երկարաձգման աշխատանքների արդյունքում ատոմակայանի շահագործման ժամկետը կերկարաձգվի մինչև 2026թ. ընդ որում երկարաձգման աշխատանքները պլանավորվում է ավարտել 2021-2024թ. : 2023թ. կապիտալացված փոխառության ծախսումների գումարը կազմել է 206,351 հազար դրամ (2022թ. կազմել է 122,324 հազար դրամ), որն առաջացել է նպատակային վարկերի նկատմամբ կիրառված փոխառության ծախսումներից (ծանոթագրություն 16):

2017թ. Ընկերությունը գնահատել է իր հիմնական միջոցները անկախ գնահատողի միջոցով, որի արդյունքում ճանաչվել է 6,195,070 հազար դրամ գումարի չափով արժեզրկումից կորուստներ:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջությամբ մաշված հիմնական միջոցների արժեքը կազմել է 11,508,830 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 11,635,793 հազար ՀՀ դրամ):

Մաշվածության գծով ծախսն ըստ ֆինանսական հաշվետվությունների հոդվածների բաշխվել է հետևյալ կերպ.

	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Վաճառքի ինքնարժեք	23,294,715	22,219,639
Վարչական ծախսեր	48,396	56,185
Այլ գործառնական ծախսեր	247,966	20,259
	23,591,077	22,296,083

13. Պաշարներ

	31.12.2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Միջուկային վառելիք ռեակտորում	7,879,262	8,046,621
Միջուկային վառելիք պահեստում	8,796,643	7,490,601
Պահեստամասեր	5,218,110	4,768,119
Հումք	3,207,379	3,205,498
Վառելիք	160,810	150,475
Այլ	475,921	403,183
Արժեզրկման պահուստ	(958,027)	(980,445)
	24,780,098	23,084,052

Արժեզրկման պահուստը ձևավորված է հետևյալ պաշարների գծով՝

	31.12.2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Հումք	580,159	602,577
Պահեստամասեր	363,046	363,046
Այլ	14,822	14,822
	958,027	980,445

14. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

31.12.2023թ.	31.12.2022թ.
--------------	--------------

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

	<u>հազ. դրամ</u>	<u>հազ. դրամ</u>
Առևտրային դեբիտորական պարտքեր	5,599,356	5,805,565
Այլ դեբիտորական պարտքեր	63,089	72,614
Արժեզրկման պահուստ	(7,495)	(11,148)
Ընդամենը ֆինանսական ակտիվներ՝ բացառությամբ դրամական միջոցների և դրանց համարժեքների	5,654,950	5,867,031
Տրված կանխավճարներ	545,208	118,152
Արժեզրկման պահուստ	(1,983)	(1,983)
Կանխավճարներ հարկերի գծով	273,688	19,995
Այլ	85	1,451
	816,998	137,615
	6,471,948	6,004,646

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի մեջ «Հայկական էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ -ից ստացվելիք միջոցները կազմել են 3,852,418 հազար ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 5,805,565 հազար դրամ):

2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեզրկման ազդեցությունը Ընկերությունը գնահատել է ոչ էական:

15. Բանկային ավանդներ

Ֆինանսական հաստատություն	Արժույթ	Տոկոսադրույք	Մարման ժամկետ	Մնացորդը	Մնացորդը
				2023թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ
Բանկ 1	ՀՀԴ	11.60%	17.08.2023	-	18,046,747
Բանկ 1	ՀՀԴ	10.00%	22.06.2023	-	380,657
Բանկ 2	ՀՀԴ	10.50%	21.06.2023	-	6,079,861
Բանկ 3	ՀՀԴ	11.00%	19.08.2024	5,063,688	-
Ընդամենը				5,063,688	24,507,265

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

16. Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները տրամադրվել են ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից ենթավարկային պայմանագրերի շրջանակներում, որոնք ֆինանսավորվել են Ռուսաստանի Դաշնության ու Վերակառուցման և Չարգացման Միջազգային Բանկի հետ կնքված միջազգային պայմանագրերի շրջանակներում տրամադրված միջոցների հաշվին, ինչպես նաև պետական բյուջեի հաշվին

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ՀՀ Ֆինանսների Նախարարության կողմից տրամադրված վարկերը և փոխառություններն ըստ պայմանագրերի.

	Արժույթ	Մարման ժամկետ	Պայմանագրային տոկոսադրույթ (%)	Արդյունավետ տոկոսադրույթ (%)	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
ՌԴ միջկառավարական վարկ	ԱՄԴ	10.07.2029	3.00%	3.00%	42,054,234	47,703,613
ՌԴ միջկառավարական վարկի համաֆինանսավորում	ՀՀԴ	10.07.2029	3.00%	3.00%	5,878,522	6,858,315
Վերակառուցման և Չարգացման Միջազգային Բանկ*	ԱՄԴ	15.11.2040	1.26%*	1.26%*	3,637,619	3,529,017
Ֆինանսների նախարարությունից բյուջետային վարկ	ՀՀԴ	30.12.2035	0.75%	9.00%	484,579	508,398
Փոխառություն ֆինանսների նախարարությունից	ՀՀԴ	10.07.2032	7. 50%	7. 50%	15,156,759	16,943,566
Փոխառություն ֆինանսների նախարարությունից	ՀՀԴ	17.06.2033	9.00%	9.00%	22,661,199	25,043,151
Փոխառություն ֆինանսների նախարարությունից	ՀՀԴ	20.10.2033	9.12%	9.12%	-	2,487,160
					89,872,912	103,073,220

* Վարկի տոկոսադրույթը լողացող է և հավասար է Բազային դրույթաչափի և Փոփոխական Սպրեդի գումարին, ինչպես սահմանված է ՀՀ Կառավարության ու Վերակառուցման և Չարգացման Միջազգային Բանկի հետ կնքված միջև 2016թ. մայիսի 12-ին կնքված 8615-AM վարկային պայմանագրում:

Ստորև աղյուսակում բերված են վարկային պայմանագրերն ըստ ընթացիկ և ոչ ընթացիկ մասերի.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

	Ընթացիկ 2023թ. հազ. դրամ	Ընթացիկ 2022թ. հազ. դրամ	Ոչ ընթացիկ 2023թ. հազ. դրամ	Ոչ ընթացիկ 2022թ. հազ. դրամ	Ընդամենը 2023թ. հազ. դրամ	Ընդամենը 2022թ. հազ. դրամ
ՌԴ միջկառավարական վարկ	7,512,769	7,402,763	34,541,465	40,300,851	42,054,234	47,703,614
ՌԴ միջկառավարական վարկի համաֆինանսավորում	1,050,167	1,064,290	4,828,354	5,794,025	5,878,521	6,858,315
Վերակառուցման և Չարգացման Միջազգային Բանկ Ֆինանսների նախարարությունից բյուջետային վարկ	31,999	23,338	3,605,620	3,505,679	3,637,619	3,529,017
Ֆինանսների նախարարությունից բյուջետային վարկ	65,763	65,999	418,815	442,399	484,578	508,398
Փոխառություն ֆինանսների նախարարությունից	1,799,616	3,276,716	13,357,144	38,710,000	15,156,760	41,986,716
Փոխառություն ֆինանսների նախարարությունից	2,423,104	-	20,238,096	-	22,661,200	-
Փոխառություն ֆինանսների նախարարությունից	-	357,047	-	2,130,113	-	2,487,160
	12,883,418	12,190,153	76,989,494	90,883,067	89,872,912	103,073,220

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

ՌԴ Միջկառավարական վարկ

Համաձայն Ռուսաստանի Դաշնության և և ՀՀ Կառավարության միջև 2015թ. փետրվարի 5-ին կնքված պայմանագրի Ռուսաստանի Դաշնությունը ՀՀ Կառավարությանը տրամադրել է 270,000 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ միջպետական վարկ և 30,000 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհ (Ծանոթագրություն 17) Հայկական Ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի ֆինանսավորման նպատակով: Համաձայնագրով վարկի տրամադրման վերջնաժամկետ էր սահմանված 2019թ. դեկտեմբերի 31-ը, սակայն 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ օգտագործվել է ընդամենը 173,575 հազար ԱՄՆ դոլար:

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի ֆինանսավորման նպատակով լրացուցիչ վարկային միջոցների անհասանելիությամբ պայմանավորված, ՀՀ կառավարությունը 2020թ. հունիսի 11-ին ընդունել է N593-Ն որոշումը, համաձայն որի ՀՀ տարածքում ատոմակայանի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների ֆինանսավորման նպատակով 2020-2022թթ. ընթացքում ՀՀ պետական բյուջեից Ընկերությանը տրամադրվել է երկարաժամկետ վարկ՝ 63,200,000 հազար դրամի չափով: 2020թ. ընթացքում վարկից օգտագործվել է 18,700,000 հազար դրամ: 2021թ. ընթացքում վարկից օգտագործվել է 25,000,000 հազար դրամ: 2022թ. և 2023թ. ընթացքում վարկեր չեն ստացվել:

2021թ. ընթացքում Ընկերությունը ստացել է 2,242,224 հազար ՀՀ դրամի բյուջետային վարկ, ՀՀ տարածքում ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների ֆինանսավորման համար ներգրավված վարկերի մարման և սպասարկման փոխհատուցման նպատակով:

Վերակառուցման և շարժացման Միջազգային Բանկ

Վերակառուցման և շարժացման Միջազգային Բանկը 2016թ. մայիսի 16-ին կնքված 8615-AM վարկային պայմանագրի համաձայն «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին վերաֆինանսավորման նպատակով տրամադրել է 8,550 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ վարկ ՀՀ Էներգետիկայի ոլորտի Ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման նպատակով:

Ֆինանսավորման գործունեությունից առաջացող վարկային պարտավորությունների համադրումը հետևյալն է.

	2023թ	2022թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Տարեսկզբի մնացորդ	103,073,220	125,223,899
Դրամական միջոցների մուտքեր վարկերի ներգրավումից	-	-
Մայր գումարի մարում դրամական միջոցներով	(14,107,378)	(10,434,884)
Տոկոսների մարում դրամական միջոցներով	(5,519,844)	(5,740,146)
Տոկոսների հաշվեգրում շահույթ վնասում (Ծան. 10)	5,011,295	5,598,470
Տոկոսների հաշվեգրում - կապիտալացում հիմնական միջոցների վրա (Ծան. 12)	206,351	122,324
Լյլ ոչ դրամային հոսք	-	-
Արտարժույթով վերահաշվարկ	1,209,268	(11,696,443)
Տարեվերջի մնացորդ	<u>89,872,912</u>	<u>103,073,220</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

17. Ակտիվներին վերաբերող շնորհներ

	31.12.2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Տարեսկզբի մնացորդ	9,147,143	10,832,590
Տարվա ընթացքում ստացված	350,254	176,501
ճանաչված շահույթում կամ վնասում (Ծան. 7)	(1,889,094)	(1,861,948)
	7,608,303	9,147,143

Ինչպես նկարագրված է Ծանոթագրություն 1-ում և 16-ում, համաձայն Ռուսաստանի Դաշնության և ՀՀ Կառավարության միջև կնքված համաձայնագրի Ռուսաստանի Դաշնությունը ՀՀ Կառավարությանը տրամադրել է միջպետական վարկ՝ ՀՀ տարածքում ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետը երկարաձգելու ծրագիրը ֆինանսավորելու համար: Նույն համաձայնագրով ամրագրվել է, որ Ռուսաստանի Դաշնությունը 30,000 հազար ԱՄՆ դոլարի անհատույց օգնություն է տրամադրելու Ընկերությանը վերոնշյալ ծրագրի իրականացման նպատակով:

Բացի վերը նկարագրածից Ընկերությունը շնորհներ է ստանում նաև ՀՀ Կառավարությունից և այլ միջազգային ֆինանսավորող կազմակերպություններից:

18. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31.12.2023թ. հազ. դրամ	31.12.2022թ. հազ. դրամ
Ատոմակայանի շահագործման վճարների գծով պարտավորություններ	7,810,550	7,810,550
Միջուկային վառելիքի գծով կրեդիտորական պարտք	5,574,530	6,753,813
Հիմնական միջոցների ձեռքբերումներ	53,920	379,931
Այլ պարտավորություններ	652,493	273,574
Ֆինանսական գործիք պարտավորություն ճանաչված	14,091,493	15,217,868
Ստացված կանխավճարներ	339,756	27,596
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	383,226	349,982
Վճարվելիք հարկեր և տուրքեր	921,490	930,134
	15,735,965	16,525,580

Որպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ դասակարգված առևտրային կրեդիտորական պարտքերի իրական արժեքը հաշվեկշռային արժեքից էականորեն չի տարբերվում:

19. Սեփական կապիտալ

Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը 2023թ կազմել է 16,662,404 հազար դրամ (2022թ.՝ 16,662,404 հազար դրամ), որը բաղկացած է յուրաքանչյուրը 4,168,030.7 դրամ անվանական արժողությամբ 3,998 սովորական բաժնետոմսից:

Պահուստային կապիտալ

Կանոնադրության համաձայն Ընկերությունը պետք է կանոնադրական կապիտալի 15%-ի չափով պահուստային կապիտալ ստեղծի: Պահուստային կապիտալը ստեղծվել է կուտակված շահույթից կատարված մասհանումների մասով:

Լրացուցիչ կապիտալ

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Լրացուցիչ կապիտալին իրենից ներկայացնում է բաժնետիրոջից ստացված փոխառությունների իրական արժեքի և պայմանագրային գումարի միջև տարբերությունը:

20. Կապակցված կողմերի միջև գործարքներ

Ընկերության բաժնետոմսերի 100% սեփականատեր և վերջնական վերահսկող կողմ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(ա) Գործարքներ բաժնետիրոջ հետ

Բաժնետիրոջից ստացված փոխառությունների և տոկոսային ծախսերի վերաբերյալ տեղեկությունը ներկայացված է Ծանոթագրություն 10-ում և 16-ում:

(բ) Առանցքային կառավարչական անձնակազմին փոխհատուցումներ

	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
Աշխատավարձ և այլ հատուցումներ	<u>94,352</u>	<u>96,407</u>

21. Պայմանական պարտավորություններ

21. 1 Պատճառված հնարավոր վնասի համար պատասխանատվություն

«Միջուկային վնասի համար քաղաքացիական պատասխանատվության մասին» Վիեննային կոնվենցիայի համաձայն Ընկերությունը որպես միջուկային կայանքի շահագործող պարտավոր է փոխհատուցել ատոմակայանի շահագործման արդյունքում պատճառված միջուկային ցանկացած վնաս: Փոխհատուցման գումարը, կարգն ու ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Վերոհիշյալ կոնվենցիայի համաձայն փոխհատուցման գումարը կարող է սահմանափակվել առնվազն 5,000,000 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր միջուկային պատահարի համար: Օրենսդրության համաձայն Ընկերությունը պարտավոր է ունենալ բավարար ֆինանսական միջոցներ պատճառված հնարավոր ցանկացած վնասի պատասխանատվությունը ծածկելու համար: Ընկերությունը վերոնշյալ պայմանները բավարարելու համար պետք է տարեկան 150,000 հազար դրամի չափով մասհանումներ կատարի: Եզված գումարը ներառված է Ընկերության էլեկտրաէներգիայի տարեկան սակագնում: Ընկերության ֆինանսական հաշվետվություններում այս պարտականության վերաբերյալ պահուստ չի ստեղծվել, քանի որ ղեկավարությունը կարծում է, որ միջուկային պատահարի հավանականությունը չնչին է:

21. 2 Ապահովագրություն

Ընկերությունը ապահովագրված չէ գործունեության ընդհատման և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ Ընկերության գործունեության հետևանքով:

21. 3 Պայմանական պարտավորություններ դատական հայցերի գծով

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև մինչև այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթիվը Ընկերությունը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական վիճակի վրա:

21. 4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ՝ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի:

Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

21. 5 Հարկային ռիսկեր

Հայաստանի հարկային, փոխարժեքային և մաքսային համակարգերը բնորոշվում են օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր կերպ են մեկնաբանվում տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ ավելի մեծ և էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ պատշաճ կերպով է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի գործող հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

21. 6 Գնումների գծով պարտականություններ

31 դեկտեմբեր 2023թ. դրությամբ Ընկերությունը ունի կապիտալ ներդրումների գծով չկատարված 15,933,694 հազար դրամ պարտավորություններ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 9,174,117 հազար դրամ):

22. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

2023թ. հունիսի 28-ին Ընդհանուր ժողովը արձանագրել է, որ զուտ շահույթի 50%-ը՝ 5,157,428 հազ. դրամը որպես պետական մասնակցության դիմաց շահաբաժին ենթակա է վճարման ՀՀ պետական բյուջե, սակայն որոշում է կայացվել այդ գումարի չափով ավելացնել Ընկերության կանոնադրական կապիտալը: 2024 թ. ի հունվարի 4-ին Հայաստանի Հանրապետության Կառավարության N 8-Ա որոշման համաձայն՝ Ընկերության 5,157,428 հազար դրամ շահաբաժնի պարտավորությունը նվազեցել է 4,993,913 հազար դրամի չափով:

23. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ Դրամը: Այն հանդիսանում է նաև Ընկերության այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը՝ հազարների ճշտությամբ:

Գործարքներ արտարժույթով

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժույթային շուկայում արտարժույթի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերագնահատվում են հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ որոշվող դրույթաչափերով: Չմարված դրամային ակտիվների և պարտավորությունների վերագնահատման արդյունքում առաջացող փոխարժեքային տարբերությունները անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները սկզբնապես ճանաչվում են սկզբնական արժեքով, իսկ հետագայում չափվում են ինքնարժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Հողամասերի գծով մաշվածություն չի հաշվարկվում: Կառուցման ընթացքում գտնվող ակտիվների գծով մաշվածությունը սկսվում է հաշվարկվել, երբ ակտիվները ավարտուն են և պատրաստ օգտագործման: Մնացած բոլոր հիմնական միջոցների գծով հաշվարկվում է մաշվածություն՝ դրանց

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

հաշվեկշռային արժեքը ակնկալվող օգտակար ծառայության ժամկետի ընթացքում բաշխելու նպատակով:

Ընկերության կողմից ճանաչված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը մեկը ներկայացված է ստորև.

Հիմնական միջոցներ

Օգտակար ծառայության ժամկետ

Շենքեր և շինություններ	20-50 տարի
Փոխանցող հարմարանքներ	20 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	5-10 տարի
Տրանսպորտային միջոցներ	10 տարի
Այլ	1-10 տարի

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետը կազմում է 2-5 տարի:

Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքի և հնարավոր իրացման զուտ արժեքի նվազագույնով:

Պաշարների ինքնարժեքը հաշվառվում է՝ օգտագործելով առաջին մուտք-առաջին ելք (ԱՄԱԵ) և ներառում ներառում է ձեռքբերման ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:

Միջուկային վառելիք

Միջուկային վառելիքը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է պաշարների կազմում: Վառելիքը ստացվում է հատուկ տարաներով, որոնք ռեակտորում տեղադրվելուց հետո օգտագործվում են 5-6 տարի: Միջուկային վառելիքը ճանաչվում է որպես ծախս՝ հիմնվելով ամսական ինժեներական հաշվարկների և բանաձևերի վրա: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտին ծախսագրված գումարը համապատասխանեցվում է փաստացի օգտագործված վառելիքի ծախսին:

Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում (կամ հանվում) են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝

- ա) «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱՇԿԿ),
- բ) «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱԱՅՖԱ),
- գ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական հոսքերի բնույթից և այն բիզնես մոդելից, որի ներքո պահվում և կառավարվում է այդ ակտիվը և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

ա) «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող».

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» այն դեպքում, երբ այն չի դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող (ինչպես նկարագրված է ստորև) և ոչ էլ որպես ԻԱԱՅՖԱ չափվող (ինչպես նկարագրված է ստորև): Բացի այդ, սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել որպես ԻԱՇԿՎ չափվող ցանկացած ֆինանսական ակտիվ, որը բավարարում է ամորտիզացված արժեքով չափվելու կամ ԻԱԱՅՖԱ չափվելու համար ներկայացվող պահանջները, եթե այդպես անելը վերացնում կամ նշանակալիորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունը, որն այլապես կարող էր առաջանալ:

բ) «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» (ԻԱԱՅՖԱ)

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» (ԻԱԱՅՖԱ), եթե

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն ապահովվում է ինչպես պայմանագրային դրամական հոսքերը հավաքելով, այնպես էլ ֆինանսական ակտիվները վաճառելով, և
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

գ) «ամորտիզացված արժեքով չափվող»

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «ամորտիզացված արժեքով չափվող», եթե այն բավարարում է հետևյալ երկու պայմաններին և նախորոշված չէ որպես ԻԱՇԿՎ չափվող՝

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար, և
- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

Ընկերությունն իր ֆինանսական ակտիվները իրենցից մեծամասամբ ներկայացնում են ամորտիզացված արժեքով չափվող ակտիվներ: Այս ակտիվները հիմնականում առաջանում է էլեկտրաէներգիայի իրացումից առևտրային դեբիտորական պարտքից, ինչպես նաև ներառում են այլ ֆինանսական ակտիվներ, որոնց նպատակն է այդ ակտիվները պահել, պայմանագրային դրամական հոսքերի հավաքման նպատակով, իսկ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը իրենցից զուտ ներկայացնում են մայր գումարի և տոկոսների վճարումներ: Դրանք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, գումարած գործարքների գծով ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են դրանց ձեռքբերման կամ թողարկման հետ, և հետագայում դրանք չափվում են ամորտիզացված արժեքով, օգտագործելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը՝ նվազեցման արժեզրկման պահուստը:

Ընկերության ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ներառում են առևտրային դեբիտորական պարտքեր, բանկային ավանդները, դրամական միջոցները և դրանց համարժեքները, ինչպես նաև այլ ֆինանսական ակտիվները: Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները և ցպահանջ ավանդներ բանկերում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառվում են վարկերը և փոխառությունները և առևտրային կրեդիտորական պարտքերը:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Ընկերությունն իր ֆինանսական պարտավորությունները դասակարգում է որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» կամ «ամորտիզացված արժեքով չափված» կախված պարտավորության ստանձնման նպատակից:

Ընկերությունը չունի «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» որևէ ֆինանսական պարտավորություն:

Ստորև ներկայացված է Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը որպես «ամորտիզացված արժեքով չափվող» դասակարգված ֆինանսական պարտավորությունների համար:

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացիոն արժեքով:

Արժեզրկում

Ընկերության հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, որոշելու՝ արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են այդ ակտիվի (կամ ակտիվների խմբի) փոխհատուցվող գումարները և համեմատվում հաշվեկշռային արժեքի հետ: Եթե գնահատված փոխհատուցվող գումարը փոքր է, ապա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև գնահատված փոխհատուցվող գումարը, և արժեզրկումից կորուստները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Նմանապես, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատվում է պաշարների արժեզրկված լինելը՝ պաշարի յուրաքանչյուր հոդվածի (կամ միանման պաշարների խմբի) հաշվեկշռային արժեքը դրա վաճառքի գնի՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները, հետ համեմատելու միջոցով: Եթե պաշարի հոդվածը (կամ միանման պաշարների խումբը) արժեզրկվել է, դրա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև վաճառքի գին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները, իսկ արժեզրկումից կորուստը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

Եթե արժեզրկումից կորուստը հետագայում հակադարձվում է, ակտիվի (կամ ակտիվների խմբի) հաշվեկշռային արժեքը ավելացվում է մինչև դրա փոխհատուցվող գումարի վերանայված գնահատականը (պաշարների դեպքում, վաճառքի գին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումներ), սակայն ոչ ավելի, քան այն գումարը, որը կորոշվել է, եթե նախորդ տարիներին ակտիվի (կամ ակտիվների խմբի) գծով ոչ մի արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորուստի հակադարձումը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները, որոնք անմիջականորեն վերագրելի են որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, Ընկերության կողմից կապիտալացվում են որպես այդ արժեքի մաս: Ընկերությունն այլ փոխառության ծախսումներն ճանաչում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք կատարվել են:

Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Ընկերությունը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Ընկերության կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է որպես հետաձգված եկամուտ և սխտեմատիկորեն փոխանցվում է շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և կիրառելիության դեպքում պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են, երբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և դրանց համապատասխան հարկային բազաների միջև առկա են տարբերություններ:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը սահմանափակվում է այն դեպքում, երբ հավանական է, որ կառաջանա հարկվող շահույթ, որի դիմաց ժամանակավոր տարբերությունները հնարավոր կլինի օգտագործել:

Հետաձգված հարկային ակտիվները կամ պարտավորությունները չափում են՝ կիրառելով հարկային դրույթաչափերը, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ակնկալվում է, որ կկիրառվեն, երբ հետաձգված հարկային պարտավորությունները/ (ակտիվները) կմարվեն/ (կփոխհատուցվեն):

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա ընթացիկ հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերաբերում են հարկերին, որոնք գանձվում են նույն հարկային մարմնի կողմից:

Հասույթ

Կատարողական պարտականություն և հասույթի ճանաչման պահը

Ընկերության հասույթը առաջանում է Էլեկտրաէներգիայի վաճառքից: Գնորդները միաժամանակ ստանում և սպառում են Էլեկտրաէներգիայի մատակարարման օգուտները՝ Էլեկտրաէներգիայի մատակարարմանը զուգահեռ, և Ընկերությունը ծառայության նկատմամբ հսկողությունը փոխանցում է ժամանակի ընթացքում, այդ իսկ պատճառով, իր կատարման պարտականությունը կատարում է և հասույթը ճանաչում է ժամանակի ընթացքում: Փոփոխուն հատուցումը, որն իրենից ներկայացնում է սպառված Էլեկտրաէներգիայի քանակության և գործող սակագների արտադրյալը, որոշվում է յուրաքանչյուր օրացուցային ամսվա վերջում վերցված հաշվիչների ցուցմունքների հիման վրա:

Գործարքի գնի որոշում և գնի բաշխում կատարողական պարտականությունների վրա

Ընկերության հասույթները գլխավորապես ստացվում են ֆիքսված գների պայմանագրերից և, հետևաբար, յուրաքանչյուր պայմանագրից ստացված հասույթի գումարը որոշվում է այդ ֆիքսված գներով, ընդ որում յուրաքանչյուր ապրանքի համար ֆիքսված է միավորի գինը: 2022թ. փետրվարից Հայաստանի Էլեկտրաէներգետիկական շուկային ամբողջովին կարգավորվող կառուցվածքից աստիճանաբար անցում է կատարել շուկայի ազատականացված կառուցվածքի՝ աստիճանաբար ներդնելով մրցակցային շուկայի բաղադրիչներ:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

Հավելված Ա - ՖՅՄՍ 13 Իրական արժեքի չափման բացահայտումներ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է այն ակտիվները և պարտավորությունները, որոնց իրական արժեքները բացահայտվել են ծանոթագրություններում.

Հոդված	Իրական արժեք Հազար ՀՀ դրամ	Գնահատման մեթոդ	Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ	Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ
Բանկային ավանդներ	5,063,688	Կարճաժամկետ (12 ամսից պակաս) տրված բանկային ավանդների հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին:	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Առևտրային դեբիտորական պարտքեր	5,654,950	Կարճաժամկետ (12 ամսից պակաս) դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին:	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Վարկեր և փոխառություններ	89,872,912	Վարկերի և փոխառությունների հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին:	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	14,091,493	Կարճաժամկետ (12 ամսից պակաս) կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին:	Մակարդակ 3	Կիրառելի չէ